Սուրեն Օհանյան
Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Իրինա Բաբայան
Եվրասիա միջազգային համալսարանի ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հոդվածում բարձրացված են բարձրագույն մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ մի շարք գործնական բնույթի առաջարկություններ: Դրանք առավելապես վերաբերում են համալսարանական կառավարման օպտիմալացման, հատկապես երկրի տնտեսական համակարգից բխող մասնագիտական կրթության իրականացման գործում շուկայական–մրցակցային լծակների օգտագործմանը:

Հիմնաբառեր. կրթական բարեփոխում, համալսարանական կառավարում, օրենքի նախագիծ, պետական բուհեր, մասնավոր բուհեր, միջբուհական մրցակցություն, շուկայական լծակներ:

ՀՀ–ում սկսվել է կրթական բարեփոխումների մի նոր շրջափուլ: Դատելով հրապարակված նախագծերից ու այդ բնագավառի առանձին պաշտոնատար անձանց ելույթներից՝ գալիս ենք այն համոզմանը, որ բարձրագույն կրթության նոր օրինագծի[1] գլխավոր բովանդակությունը և շարժառիթները դարձյալ ավելի նորացված ձևով շուկայական մրցակցային լծակների խնամքով անտեսումն է: Ինչպես նախկինում այսօր, դարձյալ պահպանվել է բուհերի կառավարման գործող գծային–ուղղահայաց կամ կենտ–

1 «Հայաստանի Հանրապետության օրենքը բարձրագույն կրթության մասին» (նախագիծ, լրամշակված), հոդված 10, հոդված 16, հոդված 24, կայք, www.edu.am,

րոնացված համակարգը, իսկ դա նշանակում է, որ բուհերը դեռևս չեն կարող լիարժեք գործել շուկայական ազատականացված դաշտում:

Այս պարագայում հարց է առաջանում. եթե էական կամ խորքային ու որակական նոր բարեփոխումներ չեն նախատեսվում, ապա ի՞նչ նպատակ է հետապնդում նոր օրենքը. մի՞թե չի կարելի գործող օրենքի շրջանակներում գտնել ուսուցման որակի բարձրացմանը միտված նպատակային լուծումներ, մանավանդ որ «նոր» (նախագծի) և «հին» օրենքների միջև սկզբունքային տարբերությունները մեծ չեն: Ավելին, հայտնվել ենք դիմորդասուղ՝ չնախատեսված իրավիճակում, դեռևս չենք քաղել ինստիտուցիոնալ հավատարմագրման պտուղները[1]: Մասնագիտական կրթությանը խոչընդոտող հիմնախնդիրները և դրանք ծնող պատճառներն արդեն բացահայտված են, և պարզ են նաև դրանց լուծման հնարավորությունները. ընդամենն անհրաժեշտ է բարձրացնել բոլոր օղակների նախաձեռնողականությունը և առանձին կառավարիչների մոտիվացվածությունը: Բուհի կառավարման բարելավման խնդրի կարևորությունից ելնելով՝ ժամանակն է նախաձեռնել այնպիսի լուծումներ (դիցուք՝ առաջին հերթին խիստ ահրաժեշտ է լուծել դասախոսական կազմի վերապատրաստման հարցը, որի համար պետք չէ նոր օրենք ընդունել), որոնք առանձնապես ծախսատար չեն և ընդամենը պահանջում են նոր մոտեցումներ, ու որոնց մասին բուհերը արդեն ավելի կամ պակաս չափով իրազեկված են: Յուրաքանչյուր համալսարան նորարարական և ստեղծարար բնույթի բարեփոխումները պետք է իրականացնի՝ հաշվի առնելով տվյալ բուհի յուրահատկությունները, հատկապես մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար եղած դասախոսական ներուժը, ուսանողների իրական ՄՈԳ-երը, ուսուցման ժամանակակից պայմաններով ապահովվածությունը և այլն[2]:

Անչափ կարևոր է նաև, որ բարեփոխումները համապատասխանեն ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ներկայիս իրադրությանը, ուսումնական հատատության պայմաններին ու ենթակառուցվածքների ունեցած ներուժին:

Բացառիկ կարևոր գործոններ են հանդիսանում ներկայիս մասնագիտական կրթական ծրագրերի՝ նոր պահանջներով հիմանվորված ելքային արդյունքների արժանահավատությունը, դրանց պահանջներին համապատասխան վերապատրաստված մասնագետների առկայությունը, ժամանակակից ուսումնամեթոդական ռեսուրսներով ապահովվածությունը, դեռևս թույլ կամ ոչ լիարժեք ձևավորված աշխատաշուկայի պահանջները, ֆինանսական սուղ միջոցները, դիմորդների քանակի հետագա վիճակագրությունը:

Բերենք ընդամենը մեկ օրինակ. եթե դասախոսը գտնվում է թոշակային տարիքում, բնական է, որ դժվարություններ կունենա ուսումնամեթոդական և տեղեկատվական համակարգերով աշխատելիս, հարկադրաբար հակ-

1 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2016, էջ 125-128:
2 Երիցյան Ս., Ճուղուրյան Ա., «Բոլոնիայի գործընթացի ուղենիշները», Երևան, 2017, էջ 67:

ված կլինի ավանդական եղանակներով ուսուցմանը, մինչդեռ այդ փորձառու դասախոսները կարող են զբաղվել դասընթացների ամփոփ ռեսուրսների մշակմամբ և որպես կոնտենտներ՝ դրանք երիտասարդ մասնագետների ուժերով՝ ժամանակակից IT տեխնոլոգիաների օգնությամբ ներկայացնել ուսանողությանը: Այլ կերպ ասած՝ թոշակային տարիքի փորձառու դասախոսի կատարած աշխատանքը պետք է նպատակայնորեն օգտագործել:

ՀՀ-ը մի բարդ սոցիալ-տնտեսական համակարգ է, որի մեջ մտնող ոլորտները չեն կարող տարանջատ զարգանալ: Համակարգի մեջ մտնող ոլորտներից յուրաքանչյուրը, առավել ևս սպասարկման գործառույթ իրականացնող բնագավառները կարող են զարգանալ պետական կամ բարեգործական ֆինանսական աջակցությամբ: Եթե այսօր պետական բյուջեից կրթության համար կատարված հատկացումները չնչին են, հետևաբար և լայնամասշտաբ և խորքային բարեփոխումների մասին խոսելն ավելորդ է, մանավանդ, որ վճարովի կրթական ծառայությունները նույնպես կրթական մեծ ռեսուրսներ չեն ապահովում ցածր վարձավճարների և նվազագույն ուսանողական համակազմի պատճառով[1]: Ուրեմն, ուսուցման արդյունավետության բարձրացմանը միտված բարեփոխումներ նախաձեռնելուց առաջ անհրաժեշտ է նախ ֆինանսական բաղադրիչի խնդրին անդրադառնալ, հետո միայն բարձրացնել ռազմավարական բնույթի նոր խնդիրներ:

Նկատի ունենալով նշված հանգամանքները՝ այսօր արդեն կարող ենք ենթադրել, որ այս շրջափուլն իր անարդյունավետությամբ ընդամենը նորից նախադեպ կարող է հանդիսանալ հաջորդի համար ու այսպես շարունակ, ինչպես անցած «բարեփոխումների» ընթացքում: Իրականում բարեփոխումը ենթադրում է ըստ բնագավառների, ծրագրային ու որակական բնութագրումների, ՀՀ յուրահատուկ պայմաններում գործող բուհերի զարգացմանը նպաստող գործոնների և այլ ուղղություններով կատարել էական բարելավումներ ու արմատական փոփոխություններ այն հաշվով, որ զարգացման նոր և իրական նախադրյալներ առաջանան[2], տեղի ունենան որակական թռիչք ապահովող այնպիսի տեղաշարժեր, որոնք լինեն ոչ թե ցանկությունների ոլորտից, այլ տարիների ընթացքում առանձին տիպական ուսումնական հատատություններում նախապես հետազոտված և փորձարկված, ակնկալվող արդյունքներն էլ լինեն երաշխավորված:

Անշուշտ, կառավարման համակարգի բարեփոխումների այս փուլում խիստ նպատակարհարմար է բարձրաձայնել մի քանի հիմնախնդիրներ, որոնց լուծումը դրական նախադրյալներ կստեղծի բուհի կառավարման համակարգի կատարելագործման համար:

Նախ ընդգծենք այսօրվա գլխավոր խնդիրը. չքննարկելով եղած անձնա-

1 Տես Սարգսյան Գ., Маркосян А. и др. «Трансформационные аспекты феномена рыночного хозяйства», Ереван, 2016, էջ 346-362:

2 Տես Օհանյան Ս., Բաբայան Ի., «Ուսուցում՝ինդուկտիվ և բազմազան մեթոդաբանություն», ԵՄՀ, «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտաժողովի, էջ 274-281:

կան կամ բոլոր այլ կարգի հեռահար ու ստվերային զանազան խոչընդոտներ առաջացնող հարցերը և հետաքրքրությունները՝ պետք է նպաստել ուսուցման համընդհանուր արդյունավետության բարձրացմանը, նպատակայնորեն կատարել բուհերի կառավարման այնպիսի բարեփոխումներ, որոնք գործնականորեն կհանգեցնեն ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Ամենագլխավոր խնդիրը առնչվում է նոր հասարակարգին բնորոշ շուկայական լծակների կիրառմանը, հատկապես՝ բոլոր պաշտոններում մրցակցային ծրագրերով ընտրությունների անցկացմանը, ուսանողների կողմից դասախոսների ընտրությանը, որոշ բուհերին տրվող նախապատվությունների վերացմանը, համալսարանների միջև արդարացի ու հավասար նախապայմանների ստեղծմանը, միջբուհական մրցակցության խթանմանը և այլն: Առանձին բուհերի նկատմամբ պետական հովանավորչությունը թույլ չի տալիս, որպեսզի յուրաքանչյուր բուհ ինքնուրույնաբար պայքարի կրթական շուկայական դաշտում գոյատևելու համար: Նույնիսկ նույնատիպության պատճառով պետական բուհերի միջև մրցակցություն տեղի չի ունենում. դիմորդը նույն մասնագիտությունների գծով բուհերի միջև որևէ ընտրություն չի կատարում, որովհետև նրանց միջև ակնառու տարբերություններ չկան:

Տարիներ շարունակ շրջանառվող «Պետական դիպլոմ» ընդհանրական և «նախընտրություն տվող» հասկացությունը ջնջում է բուհերի միջև եղած չնչին տարբերությունները, աշխատաշուկայում էլ նույն մասնագիտության շրջանավարտները մասնագիտական հմտություններով միմյանցից գրեթե չեն զանազանվում (դիմորդներն էլ հարկադրաբար նախընտրում են միջազգային կամ միջպետական բուհերը, որոնք ազատ և ինքնուրույնաբար, այլ երկրների օրենքներով են գործում՝ առաջարկելով գրեթե նույն ծրագրեր:

Մեկ այլ խնդիր. տեղական բուհերն անցնում են հավատարմագրման միևնույն գործընթացով՝ անկախ այն փաստից, թե բուհի հիմնադիրը պետությունն է, թե՞ մասնավոր անձը կամ ընկերությունը, գործում են միևնույն օրինականություն պահանջող դաշտում, պետության առջև կրում են միևնույն պատասխանատվությունը: Հետևաբար, «պետական» և «մասնավոր» բուհ բնորոշումներն արդեն խտրականության պատճառ են դառնում և բնակչության շրջանում առաջինների հանդեպ վստահություն է առաջանում, որը և դիմորդների համար միասնական քննական համակարգին մասնակցելիս ու բուհն ընտրելիս նախապատվության պատճառ է դառնում: Յուրաքանչյուր համալսարան ունի իր հեղինակությունը, վարկանիշը, մասնագետների պատրաստման ու որակավորման բնութագրերը, որոնք չեն բացահայտվում և բուհն ընտրելիս հաշվի չեն առնվում: Միանգամայն անտրամաբանական է, օրինակ, որ միջազգային բուհերը գործում են այլ՝ դիմորդների համար նախընտրելի բարձր գրավչություն ունեցող սկզբունքներով՝ աստիճանաբար նեղացնելով տեղական բուհերի գործունեության շրջանակները: Այս խնդիրները լրջորեն խախտում են բուհերի միջև հավասարության սկզբունքը. ցածր մոտիվացվածություն ունեցող դիմորդը նախընտրում է այն համալսարանը,

որտեղ ընդունելությունը հեշտ է (առավել ևս՝ օտարամոլությամբ տառապողները):

Հաջորդ խնդիրը վերաբերում է ընդունելության կարգին. դիմորդը պետք է կարողանա ինքնուրույնաբար կատարել բուհի ընտրություն, առանց բուհի նախնական ընտրության՝ ԳԹԿ-ի կողմից ունենա իր առարկաների հավաստագիրը (որը պետք է ունենա նաև ֆինանսական պարունակություն) և հետո միայն ինքնուրույնաբար կատարի առավել որակյալ ուսուցում ապահովող բուհի ընտրություն: Մինչդեռ բուհերի ընդունելության կարգերը գրեթե չեն փոխվել, նման նոր հնարավորություններ չեն ապահովում: Եթե համեմատենք այսօրվա և խորհրդային բուհերը միմյանց հետ, ապա ընդունելության կարգում քիչ տարբերություններ կգտնենք. բայց չէ՞ որ երկրի հասարակական-քաղաքական կառուցվածքը փոխվել է, հետևաբար բարձրագույն կրթական հաստատությունները նույնպես պետք է գործեն այդ նոր հասարակարգի գլխավոր սկզբունքի՝ շուկայական մրցակցային պահանջներով:

Մի հրատապ խնդիր ևս. վերջերս, ուսանողների թվից ելնելով. համալսարանների տարբերակումը զանազան շահարկումների տեղիք է տալիս: Համալսարանի առավելագույն և նվազագույն ուսանողական համակազմի թվի վերաբերյալ հիմնավորումներ չկան, չեն էլ կարող լինել: Բուհի ուսուցման որակական բնութագրումներից է կախված նրա գործունեության ընթացքը: Հարց է առաջանում՝ ինչու չենք խոսում հանրապետության բոլոր բուհերը մեկ համալսարանում միավորելու մասին (կան եվրոպական համալսարաններ հարյուր հազարից ավելի ուսանողներով, ավելի շատ, քան ՀՀ բոլոր բուհերը միասին վերցրած)[1]:

Կամ ինչո՞ւ չի կարելի ունենալ շուկայական պահանջարկ ունեցող մի քանի մասնագիտությամբ և մի քանի հարյուր ուսանողական համակազմով բարձրակարգ կրթություն իրականացնող համալսարաններ, որոնք միայն դիալեկտիկորեն զարգանալով կարող են խոշորանալ (այլ ոչ թե փորձենք մեխանիկորեն խոշորացնելով՝ միմյանց միավորել բոլոր առումներով թույլ բուհերը): Բերենք մի վառ օրինակ՝ ՀՀ-ում Ամերիկյան համալսարանը հիմնադրվելիս ուներ մոտ վաթսուն ուսանող, իսկ այսօր... Կամ նույնը վերաբերում է գյուղական սահմանամերձ դպրոցներին՝ ներկայիս դաս-դասարանային համակարգը պահպանելու դեպքում մի քանի աշակերտով դասարաններ չեն կարող գործել, իսկ եթե անցում կատարենք տարիքային առումով խառը՝ խմբային ազատ ուսուցման, ապա բոլոր դպրոցներն էլ կարող են գործել[2]: Բուհական համակարգի ուսանողական համակազմի թվի վրա բացասական ազդեցություն է թողել արտագաղթը, ոչ պետական բուհերի նկատմամբ դրսևորած ոչ բարենպաստ վերաբերմունքը (օրինակ՝ հավատարմագրման գործընթացի կասեցումը), հանրակրթական բարեփոխումների բովանդակությունը, 12-ամյա կրթական համակարգի ներդրումը և այլն:

Մի շարք ոչ պետական բուհերի զարգացումը տարիներ առաջ կասեց-

1 Տես Митио Каку «Учеба уже не будет базироваться на запоминании», www.vospitaj.com

2 Տես «Лучшее образование-финское. Как у них это получилось?», www.ptzqovorit.ru

վեց, և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ընկերություններ, օրենքի հետադարձ ուժի պարտադրման միջոցով, զրկվեցին այդ իրավիճակից օգտվելու հնարավորությունից, պետական բուհերի հետ համատեղ անարդարացիորեն հայտնվեցին միևնույն միասնական քննական համակարգում, որի հետևանքով իներցիոն կարգով բարձր վարկանիշ և հասարակական ճանաչում ունեցող արդեն բևեռացված բուհերը շահեցին: Տուժեցին մասնավոր բուհերը, որոնք արդեն այս հաջորդ բարեփոխումների փուլում անիրավացիորեն հայտնվեցին «խոշորացման» վտանգի առաջ:

Դիցուք, խոշորացրեցինք բուհերը, ինչ է՝ կբարձրանա՞ ուսուցման որակը, մի՞թե այսօր խոշոր բուհերը այդ տեսակետից լավ օրինակ են հանդիսանում: Փորձով ապացուցված է, որ միայն փոքրաթիվ խմբերում է հնարավոր հասնել ուսուցման բարձր որակի, մինչդեռ 60-ից 120 ուսանողներով խմբերում, հատկապես մասնագիտական գործնական կարողությունների և հմտությունների զարգացման մասին խոսելն ավելորդ է (ինչը այսօրվա գլխավոր պահանջն է): Որակական այդ բնութագրումներին խոշոր բուհերը նույնպես փորձում են հասնել փոքրաթիվ խմբերով աշխատելու միջոցով, այսինքն՝ դրանք ևս ձեռք են բերում փոքր բուհերին բնորոշ հատկանիշներ: Փաստորեն, խոշոր բուհերը առանձնանում են նաև անկառավարելիությամբ պայմանավորված թերություններով, որոնք հանգեցնում են նաև անտնտեսվարության:

Հետևաբար, ավելորդ ենք համարում բուհերի տարբերակումն ըստ ուսանողների թվի: Այսօր բուհին ներկայացվող գլխավոր պահանջը ուսանողի տարբերակված հետագծով ուսուցման ապահովումն է, ինքնուսուցման, ինքնակրթության և հետազոտական դաշտում մեթոդապես անսխալ գործելու լիարժեք հնարավորությունների ստեղծումը, ուսուցմանը զուգընթաց մասնագիտական աշխատանքի (թեկուզ որպես կամավոր) ներգրավումը, շարունակական կրթական գործունեության իրականացումը, որոնց ավելի արագ և արդյունավետ կարելի է հասնել փոքրաթիվ ուսումնական խմբեր ձևավորելով:

Համալսարանական կառավարման բարելավման և ուսուցման բարձր արդյունավետության ապահովման նպատակով էական նշանակություն կարող են ունենալ նոր ծրագրային համակարգերի ներդրումը, շրջանավարտ-մասնագետների մոտ նախապես սեփական բիզնես նախաձեռնելու կարողությունների զարգացումը, մրցութային հիմունքներով աշխատանքի անցնելու համար անհրաժեշտ գործնական և ստեղծարար մասնագիտական հմտությունների զարգացմանը միտված ռազմավարության իրականացումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Երիցյան, Ս., Ճուղուրյան Ա., «Բոլոնիայի գործընթացի ուղենիշները», Երևան, 2017:
2. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2016, էջ 125-128:
3. «Հայաստանի Հանրապետության օրենքը բարձրագույն կրթության մասին» (նախագիծ, լրամշակված), հոդված 10, հոդված 16, հոդված 24, կայք, www.edu.am;
4. Օհանյան Ս., Բաբայան Ի., Կրթական բարեփոխումների մեկնարկային հիմնադրույթները//«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտ. նյութերի ժողովածու: Եր., Եվրասիա միջազգային համալսարան, Գիրք 2, 2013, էջ 4-6:
5. Օհանյան Ս., Բաբայան Ի., Մասնագիտական կրթական ծրագրի կազմման մեթոդական մի քանի հարցեր//«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտ. նյութերի ժողովածու: Եր., Եվրասիա միջազգային համալսարան, Գիրք 2, 2013, էջ 19-22:
6. «Лучшее образование-финское. Как у них это получилось?», www.ptzqovorit.ru
7. Митио Каку, «Учеба уже не будет базироваться на запоминании», www.vospitaj.com
8. Саргсян Г., Маркосян А. и др. «Трансформационные аспекты феномена рыночного хозяйства», Ереван, 2016:

Сурен Оганян
Ректор Международного университета Евразия
Доктор географических наук, профессор

Ирина Бабаян
Проректор по учебной и научной работе Международного университета Евразия

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ УПРАВЛЕНИЯ УНИВЕРСИТЕТОМ

В статье поднимаются ряд практических рекомендаций по законопроекту о высшем профессиональном образовании РА. Они в основном касаются оптимизации университетского управления, в особенности в использовании рыночных рычагов, вытекающих из экономической системы страны,в деле реализации профессионального образования.

Ключевые слова: образовательная реформа, университетское управление, законопроект, государственные университеты, частные университеты, межуниверситетское соперничество, рыночные рычаги.

Suren Ohanyan
Rector of Eurasia International University,
Doctor of Geographical Sciences, Professor

Irina Babayan
Vice-President of Educational Affairs Eurasia International University

SOME ISSUES OF UNIVERSITY GOVERNANCE IMPROVEMENT

The article raises some practical suggestions on the outline of Law of Higher Professional Education of RA. They particularly refer to the optimization of university management and the utilization of market-competitive levers in realizing professional education derived from country's economic system.

Key words: Educational reform, university management, outline of law, state universities, private universities, inter-university competition, market levers.